

Թիւ 27291
Ապրիլ 25, 1981

Արժանաշնորհ

Տ. Յուսիկ ՔՇՆՅ. Նշանեան
Սուամեայ Հովհիւ Ա. Խաչ Եկեղեցւոյ
Թորոնթօ.

Սիրելի Տէր Յուսիկ,

Ապրիլ 22ին սաացած ենք Ապրիլ 13, 1981 թուակիր ձեր նամակը, ուր կը տեղեկացներ թէ Փետրուար 14ին գումարուած՝ աշարեկան անդամական ժողովի ատենազրութիւնները եւ պահանջնելած միւս տեղեկութիւնները աւելի կանուի դրկել կարելի չեղաւ՝ :

Ցիշեալ տեղեկագիրները ստանալէ եար Առաջնորդարանի վարիչ Ցիար Գրանք Սթոնսըն հետաձայնով տեղեկացուցած է ծխական Խորհուրդի Ատենապետին որ Թեմական Խորհուրդը որոշած է չվաւերացնել ծխական Խորհուրդներու անդամոց ընտրութիւնը մինչեւ որ վճարուին համայնքի տարեառուրբերը:

Այսու գիրով կը հրահանգանք որ անմիջապէս համականիքոյեանեալ սարեառուրբերը --1980 տարուան հաշւոյն 4,560 տովար եւ 1981 տարուան հաշւոյն 1,824 առլար -- Առաջնորդարանի անուան գրուած փոխգիրով մը յանձնուին Թորոնթոյի մէջ՝ Հոգ. Տ. Եղիշէ ծ. Վրդ. Կիզիրեանի, որպէս զի ան այդ գումարը փոխանցէ՝ Պահատիըն հմֆիրեթ Պանք Ավ Պամբրս՝ ի մօտ Առաջնորդարանի անունով սացուած հաշիւին:

Համեցէք անմիջապէս գրաւոր կերպով մեզի տեղեկացնել որ վերոյիշեալ փոխգիրը յանձնուած է Հոգ. Տ. Եղիշէ ծ. Վրդ. Կիզիրեանի՝ որպէս զի վաւերացնենք ծխական Խորհուրդի ընտրութիւնը:

Սիրոյ ողջ ւնիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՅ
Առաջնորդ

Օրինակ՝ Հոգ. Տ. Եղիշէ ծ. Վրդ. Կիզիրեանի
ծխական Խորհուրդի Ատենապետին

3. Գ. Ամերիկեան 4,560 տոլարը այսօրուան սակով համարժէք է զանատական 5,467 տոլարի, իսկ 1,824 տոլարը 2,187 տոլարի: